18050

Ի. ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎ

ՃԱՊՈՆԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՉԻՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ԴԵՄ

ԿՈԼՏՆՏԵՍԱՑԻՆ ՅԵՎ ԲՐԻԳԱԴԱՅԻՆ ՊԱՏԻ ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ՀԵՌԱԿԱ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

327
Ա-29

ОБЯЗАТЕЛЬНЫЙ
КОНТРОЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ-ԺԿԽ-Ի ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
„ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ“ ԵՐԵՎԱՆ 1939 Թ.

327
Ա-29

2 7 SEP 2006
15 JAN 2010

Ի. ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎ

ՃԱՊՈՆԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՉԻՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ԴԵՄ

ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՅԵՎ ԲՐԻԳԱԴԱՅԻՆ ՊԱՏԻ ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ՀԵՌԱԿԱ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ-ԺԿԽ-Ի ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
„ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ“ ՑԵՐԵՎԱՆ 1939 Թ.

0 4 .02. 2013
18050

Պատ. խմբագիր՝ Գ. ԶՈՀՐԱԲՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. Библиотека
ՀԱՍՌ-Арм. ССР
Ա. ԱՄ. Ա. Мясникян
ՍՍՄՍ-ի ԿՍՄ-ի ԱՆՎԱՆ
00608-67

Դլավլիտի լիազոր. Ե 2232 Պատվեր № 251 Տիրաժ 1200
Հանձնված է արտադրության 7/III 1939 թ.
Ստորագրված է տպագր. լույսն 4/IV 1939 թ.

Հայկական ՀԽՍՀ-ի Ի-ի Հրատարակչություն
„Խորհրդային Հայաստանի" տպարան, Երևան

С арт-н
3025

Ի. ԵԼԵՖԱՍԱՆԴՐՈՎ

ՃԱՊՈՆԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՉԻՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ԴԵՄ

Ճապոնական ասմուրայները կողոպիչ ու կատաղի պատերազմ են մղում չինական ժողովրդի դեմ:

Չինական ժողովուրդը լի յե պատրաստակամությամբ հակադրվելու լկտի ճապոնական զավթողներին մինչև վերջ, մինչև լրիվ հաղթանակը: Ցեվ չինական ժողովուրդը կհաղթի:

Այս գրքույկը պատմում ե Ճապոնիայի և Չինաստանի ուժերի մասին, այն մասին, թե ինչպես և ում մեղքով ծաղեց պատերազմը նրանց մեջ, լկտի զավթողների ավազակային պլանների մասին, չինական ամբողջ ժողովրդի ազգային միասնության մասին՝ թշնամու հանդեպ, չինական ժողովրդա- հեղափոխական հերոսական 8-րդ բանակի մասին, այն մասին, թե ինչ ե կատարվում Չինաստանում:

Կարդացեք այս գրքույկը կոլտնտեսականների հետ միասին:

Ուսումնասիրեք այս գրքույկի նյութերը՝ կենտրոնական թերթերից Չինաստանում տեղի ունեցող պատերազմի մասին տեղեկությունները բարձրաձայն ընթերցությամբ հաղորդելու ժամանակ:

Ողնեցե՛ք կոլտնտեսականներին ամեն օր ծանոթանալու այն բանի հետ, թե ինչպես են ծավալվում ռազմական գործողությունները Չինաստանում:

ՃԱՊՈՆԻԱՅԻ ՈՒԺԵՐԸ ՅԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՈՒԺԵՐԸ

Ճապոնիան մի պետություն է, վորը գտնվում է Հեռավոր Արևելքում, Խաղաղ ովկիանոսի ափին: Այդ պետությունը տարածված է կղզիների յերկար շղթայի վրա: Այդ կղզիներից ամենախոշորները չորսն են՝ Հակկայդո, Հոնսյու, Սիկոկու և Կյուսյու: Այդ խոշոր կղզիների շուրջը փռված են բազմաթիվ մանրները: Ճապոնիայից հյուսիս ընկած է Սախալին կղզին, վորի հարավային մասը պատկանում է ճապոնական պետությանը: Հարավից կղզիների շղթան վերջանում է Ֆորմոզա կղզով, վորը խլել է նա Չինաստանից 1895 թվին: Արևելքից ճապոնական կղզիները վողողվում են Խաղաղ ովկիանոսով, արևմուտքից՝ Ճապոնական ծովով և Արևելա-Չինական ծովով: Այդ յերկու ծովերը ճապոնական կղզիները բաժանում են Ասիական մայր ցամաքից:

Ասիական մայր ցամաքի վրա Ճապոնիան գավթել է Կորեյա թերակղզին:

Ճապոնական տիրապետության ընդհանուր տարածությունը կազմում է մոտավորապես 680 հազար քառակուսի կիլոմետր: Ճապոնիայի ազգաբնակչությունը անցնում է 70 միլիոնից: Ճապոնիան ունի բարձր զարգացած արդյունաբերություն: Անցյալ դարի յերկրորդ կիսում, և առանձնապես այս դարում ճապոնական կապիտալիստների կողմից կառուցվեցին շատ գործարաններ ու ֆաբրիկաներ այդ թվում շատ ձեռնարկություններ ծանր ինդուստրայի: Տարեց տարի Ճապոնիան ար-

տահանում է շատ արդյունաբերական ապրանքներ, ընդվորում, նույնիսկ Յեվրոպայի և Ամերիկայի յերկրները: Ճապոնական կապիտալիստները ծայր աստիճան ցածր են վարձատրում իրենց բանվորների աշխատանքը և դրա համար ել հեշտությամբ կարող են մրցել արտաքին շուկայում ուրիշ յերկրների կապիտալիստների հետ: Ամենից խոցելի տեղը ճապոնական տնտեսության համար հումույթի պակասն է յերկրում: Ճապոնական արդյունաբերության զգալի մասը աշխատում է դրսից բերված հումույթի վրա:

Չինական հանրապետությունը— դա մի լայնածավալ պետություն է, վորը բռնում է Ասիայի զգալի մասը: Հյուսիսից Չինաստանի սահմանն է կազմում Մոնղոլական ժողովրդական հանրապետությունը և ԽՍՀՄ-ը: Հարավ-արևմուտքում Չինական սահմանները հասնում են մինչև Բրիտանական Հնդկաստան, Հարավում— մինչև Ֆրանսիական տիրապետություն— Հնդկաչինը: Չինաստանի Արևելյան ափերը վողողվում են՝ Դեղին, Արևելա-Չինական, Հարավ-Չինական ծովերով:

Չինաստանի տարածությունը կազմում է մոտ 9½ միլիոն քառակուսի կիլոմետր: Չինաստանի ազգաբնակչության ճիշտ թիվը հայտնի չէ, այնքան վորքան այդ յերկրում յերբեք չի անցկացվել ազգաբնակչության ընդհանուր մարդահամար: Չինական կառավարական հիմնարկների և վորոշ պիտակների մոտավոր հաշվարկումով Չինաստանում բնակվում է մոտ 450 միլիոն մարդ:

Չնայած բնական իր անսպառ հարստություններին,

Չինաստանը դեռ համարվում է տնտեսապես հետամնաց յերկիր: Ցերկրում համեմատաբար քիչ են արդյունաբերական ձեռնարկությունները, իսկ այն, ինչ եկ վոր կա պատկանում է դերազանցապես ռուսերկրյա կապիտալիստներին: Չինաստանում ծանր արդյունաբերությունը համարյա բոլորովին բացակայում է: Գյուղատնտեսությունը տարվում է պատենական յեղանակներով: Ցերկրում քիչ կան յերկաթուղիներ և հաղորդակցության այլ ճանապարհներ:

Չինաստանի մեծ թուլությունը Ճապոնիայի և ուրիշ յերկրների հետ համեմատած, մշտապես յեղել է չինական պետության մեջ միասնության բացակայությունը: Ցերկրի ընդհանուր հետամնացության պատճառով չինական ռազմական պետերը— զեներալները լրիվ կերպով տիրակալեցին նրա առանձին նահանգները: Այդ զեներալները մշտապես պայքարում եյին իրար դեմ հանուն իշխանության, նրանք ունեյին վարձու զորքեր ու վարում եյին ներքին յերկարատև պատերազմներ: Ռուսերկրյա կապիտալիստները ներխուժելով Չինաստան, հմտորեն բոցավառեցին այդ ներքին պատերազմը յերկրում, քանի վոր դա ձեռնտու յեր նրանց համար՝ վորպեսզի Չինաստանը մնար անջատված և թույլ պետություն:

Չինաստանի կտրվածությունն ու թուլությունն իմպերիալիստներին հնարավորություն տվին սարկացնել և կողոպտել չինական ժողովրդին: Վերջին ժամանակներս դրանով առանձնապես լայնորեն զբաղվեցին ճապոնական իմպերիալիստները, վորոնք վորոշել եյին ինչ գնով եկ վոր լինի իրենց ձեռքն առնել հսկայական Չինաստանը և միացնել այն իրենց տիրապետություններին:

Ճապոնական իմպերիալիստները կարծում եյին, վոր հետամնաց ու կտրտված Չինաստանը նրանց հեշտ ավար կլիներ:

ՃԱՊՈՆԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԻ ՊԼԱՆՆԵՐԸ

Ճապոնական իմպերիալիստների պլանները Չինաստանի հափշտակումով չի սահմանափակվում: Նրանք բարձրաձայն յերգում են ամբողջ Ասիայի ու նույնիսկ ամբողջ աշխարհի տիրապետման մասին: Այդ վոգով չափազանց բացարձակ և չափազանց լրիվ կերպով արտահայտվում են ճապոնական շատ ռազմական ու պետական գործիչներ: Նրանք խոսում են այն մասին, վոր Չինաստանից հետո կգրավեն Հնդկաստանը, Հնդկաչինը, Ինդոնեզիան (Հոլանդական տիրապետություն—Խաղաղ ովկիանոսում), Ֆիլիպինյան կղզիները (ամերիկական կղզիներ Խաղաղ ովկիանոսում), Ավստրալիան, վորից հետո արշավի կգնան... ամբողջ աշխարհի վրա:

Իրենց լկտիության մեջ ճապոնական ագրեսոր հափշտակիչները հասնում են այն բանին, վոր փորձում են հարձակվել մեր սոցիալիստական հայրենիքի սրբազան սահմանների վրա: Կործանիչ հակահարվածը, վորով խորհրդային սահմանների հերոսական պաշտպանները դիմավորեցին կապը կտրած սամուրայներին Խասան լճի մոտ, ցույց տվեց ամբողջ աշխարհին, վոր

Ճապոնական իմպերիալիստների հակախորհրդային պլանները յերբեք չեն իրականանա:

Ճապոնական իմպերիալիզմը պատերազմի գլխավոր ոջախն է հանդիսանում Հեռավոր Արևելքում: Ճապոնիայի այժմյան կառավարողները ուժեղ կերպով պատրաստվում են մեծ պատերազմի՝ աշխարհի վերաբաժանման համար: Ճապոնական կառավարությունը տենդորեն ավելացնում է իր զինվածությունը: Նա կանգ չի առնում ռազմական հսկայական ծախսերի առաջ, թեկուզ այդ ծախսերը հյուծում են յերկրին, քայքայում են նրա տնտեսությունը և ինչպես ծանր բեռ նստում են աշխատավոր ազգաբնակչության ուսերին:

Ճապոնական ռազմամոլները Չինաստանի դրավմանը նայում են վորպես հետագա ռազմական ավանտյուրաների առաջին քայլ: Նրանք հյուս ունեն ամրապնդել իրենց եկոնոմիկան ի շնորհիվ Չինաստանից դրված հողերի:

Ամենից առաջ ճապոնացիները Չինաստանում մոտ դիր են ձեռք բերել իրենց արդյունաբերության համար հումույթ— մի բան, վորից իրենց մոտ քիչ կա— ածուխ, յերկաթ, բամբակ և այլն: Այդ հումույթին տիրանալը թույլ կտար նրանց նոր պատերազմներ սարքել: Չինական դյուղատնտեսությունը, ճապոնական դեներալների կարծիքով, կարելի կլիներ հարմարացնել՝ ճապոնական բանակին և ազգաբնակչությանը սննդամթերքներով մատակարարելու համար: 450 միլիոն ազգաբնակչության մեջ ճապոնական ռազմամոլները յենթադրում են զինվորներ հավաքագրել իրենց ոժանդակ զորքերի համար: Վերջապես, զավթողները հույս ունեն ոգտագործել չինական տերիտորիան, վորպեսզի ընդհուպ մոտենան այն հողերին, վորոնց վրա նրանք մտածում են կատարել հետագա հարձակումներ:

Ճապոնական իմպերիալիստների կողմից Չինաստանի նվաճումը պատերազմների ամբողջ շղթայի հիմք կդներ Հեռավոր Արևելքում: Ամրապնդվելով, ճապոնական զավթողները այդ դեպքում ձեռնամուխ կլինեին համաշխարհային առաջնության համար պայքարի իրենց խելացար պլանների կատարմանը:

Ճապոնական ճնշումին հակահարված տալով, չինական ժողովուրդը դրանով իսկ կանգնեցնում է ընդհանուր պատերազմի հրձիգի հանցագործ ձեռքը:

ԻՆՉՊԵՍ ՍԿՍՎԵՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ

Ճապոնական ռազմամոլները անցյալում մի անգամ չե, վոր մղել են ավազակային, զավթողական պատերազմներ Չինաստանի դեմ: 1895 թ. պատերազմում նրանք խլեցին Չինաստանից մեծ կղզի— Ֆորմոզան: 1933 թվին Ճապոնիան դրավեց մի հսկայական մարզ— Մանջուրիան՝ Չինաստանի Հյուսիս-Արևելքում: 1932 թվին ճապոնացիները հարձակվեցին չինական խոշորագույն արդյունաբերության ու առևտրական կենտրոն— Շանհայի վրա և դրավեցին այն մի առ ժամանակ, չընայած չինական 19-րդ բանակի և տեղական ազգաբնակչության համառ դիմադրությանը: Հետագայում ճապոնացիները Անգլիայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների ճնշման ներքո Շանհայը վերադարձրին չինական կառավարությանը, բայց ստիպեցին նրան այդ

բանի համար մի շարք զիջումներ կատարել:

Բոլոր այդ պատերազմներում Ճապոնիան զորք ուներ ներքին պատերազմների հետևանքով թուլացած Չինաստանի հետ: Իրականում նա պատերազմում էր ոչ ամբողջ յերկրի դեմ, այլ առանձին չինական դեներալների դեմ, վորոնք վարում եյին այս կամ այն մարզը: Այդ կառավարիչներից վոմանք չկարձեցին դիմադրել ճապոնական հերթական զրոհին, այսպես որինակ, Մանջուրիայի կառավարիչը զերադասեց այդ մարզը հանձնել Ճապոնիային առանց կռվի:

Այդորինակ թեթև հաղթանակները հարբեցրին ճապոնական ռազմամոլներին: Նրանք վորոշեցին, վոր չինացիների դեմ կռվելը դատարկ բան է: Վողջ Չինաստանի գրավումը սկսեց թվալ նրանց՝ ինչպես մի թեթև ռազմական զրոսանք:

Ճապոնական գլխավոր շտաբը ուշի-ուշով պատրաստվում էր վճռական արշավանքի՝ ընդդեմ Չինաստանի: Նա իր զորքերը առաջ շարժեց Մանջուրիայից Հյուսիս-Արևելյան Չինաստանի այլ նահանգները, ձեռնտու դիրքեր գրավելով՝ յերկրի հիմնական շրջանները ներխուժելու համար: Ճապոնական հետախուզությունը հեղեղեց Չինաստանն իր շպիոններով: Ճապոնիայի ռազմական արդյունաբերությունը կատարելագործեց բանակի տեխնիկական հագեցվածությունը, նա խապատրաստեց ռազմական հանդերձանքի խոշոր պաշարներ: Ճապոնիայի շատ գործարաններ ու ֆաբրիկաներ, վորոնք առաջ արտադրում եյին սպրանքներ՝ խաղաղ պայմանների համար, փոխադրվեցին ռազմական ռելսերի վրա և սկսեցին զենք պատրաստել:

Կատարելով բոլոր այդ նախապատրաստական միջոցառումները, ճապոնական ռազմամոլները վորոշեցին, վոր այլևս հապաղելու հարկ չկա: Պատերազմը սկսվեց 1937 թ. հունիսի 7-ի լույս 8-ի գիշերը՝ ճապոնական զորքերի պրովոկացիոն հարձակումով չինական զորամասերի վրա՝ Հյուսիսային Չինաստանի Լյուկոուցզյաո քաղաքում:

Ճապոնական հրամանատարությունը յենթադրում էր պատերազմը վերջացնել ամենակարճ ժամկետում-յերկուսից յերեք ամիսների ընթացքում: Ընդվորում նա ցանկանում էր ընթացքի մեջ դնել միայն փոքրաքանակ զորքեր: Ճապոնական դեներալները մտածում եյին գրավել մի քանի չինական քաղաքներ և կարևոր շրջաններ, վորից հետո սպասում եյին Չինաստանի հանձնվումը՝ հաղթողի վողորմածությանը: Նրանք համոզված եյին, վոր Չինաստանը շատ շուտով կսկսի խնայում խնդրել և կկդունի նրա թելադրած բոլոր պայմանները:

Սակայն դեպքերը բոլորովին այլ ընթացք ստացան: Այս անգամ ճապոնական դեներալները անակնկալի յեկան Չինաստանում դեմ հանդիման կանգնելով ոչ թե առանձին դեներալների ու նրանց վարձու զորքերի, այլև ամբողջ չինական մեծ ժողովրդի:

ՉԻՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՅԵԼՆՈՒՄ Է ՊԱՅՔԱՐԻ

Ճապոնացիների կողմից 1931 թվին Մանջուրիայի գրավումից հետո ամբողջ Չինաստանում արդեն սկսեց բարձրանալ հակաճապոնական շարժման հզոր ալիքը:

Չինական ժողովուրդը տեսավ, որ իր վրա հարձակվեց ուժեղ և անինա հակառակորդ։ Մանջուրիայի ուրինակով չինական ժողովրդական մասսաները համոզվեցին, որ այդ հակառակորդը մի դաժան հարստահարող է, ժողովուրդը հասկացավ, որ նրա միակ փրկությունը՝ ոտարերկրյա զավթողների դեմ անվեհեր պայքարի մեջ է։

Չինական ազգաբնակչությունը սկսեց բայկոտի յենթարկել ճապոնական ապրանքները (այսինքն հրաժարվել այդ ապրանքները գնելուց)։ Չինական քաղաքներում և գյուղերում լայն մասսաները սկսեցին հակաճապոնական միտինգներ ու դեմոնստրացիաներ գումարել, որոնց մասնակցում էին ազգաբնակչության բոլոր շերտերը։ Միտինգների և դեմոնստրացիաների մասնակիցները դիմեցին Նանկինի Չինական կենտրոնական կառավարությանը, պահանջելով՝ դադարեցնել ներքին պատերազմները և միացնել ժողովրդի բոլոր ուժերը ընդհանուր թշնամու դեմ—պայքարելու համար։

Այդ ժամանակ Նանկինյան կառավարությունը ռազմական գործողություններ էր վարում Չինաստանի խորհրդային շրջանների և չինական Կարմիր Բանակի դեմ։ Այդ պատերազմում Չինական ժողովուրդը սպառեց ուժերը, որոնք անհրաժեշտ էին ընդհանուր թշնամուն հակահարված տալու համար։ Չինաստանի Կոմունիստական կուսակցությունը, Ճապոնիայի կողմից Մանջուրիան զավթելուց հետո անմիջապես իր գրոշների վրա գրեց հետևյալ լոզունգը—«Հանուն չինական ազգային— պատերազմի՝

ընդդեմ ճապոնական հափշտակիչների»։ Սակայն Չինական կենտրոնական կառավարությունը չունկնդրեց այն ժամանակ Կոմկուսի ձայնին։

1937 թ. սկզբին Չինաստանում կայացավ Գոմինդանի՝ այդ կառավարական կուսակցության Կենտրոնական Գործադիր Կոմիտեի պլենումը։ Չինական Կոմունիստական կուսակցության Կենտրոնական Կոմիտեն առաջարկեց պլենումին հանուն ճապոնական հափշտակիչների դեմ միացյալ պայքարի համագործակցություն ստեղծել Գոմինդանի և Կոմկուսակցության միջև, Կոմկուսակցությունն առաջարկեց վորոշակի պայմաններ և ձեռնարկումներ այդ համագործակցության ամրապնդման համար։ Կոմկուսակցությունը լարեց իր բոլոր ուժերը, վորպեսզի կազմակերպի հակաճապոնական ազգային ճակատ, հզոր պայքարի ճակատ ընդդեմ չինական ժողովրդի հարստահարողների։

Այդպիսի ճակատ սկսվեց իրականանալ միայն ճապոնական զորքերի Չինաստանի հիմնական շրջանները ներխուժելուց հետո։ 1937 թ. սեպտեմբերի 23-ին չինական բոլոր թերթերը տպագրեցին Կոմունիստական կուսակցության Կենտրոնական Կոմիտեի դիմումը, վորտեղ հաղորդվում էր Կոմկուսակցության և Գոմինդանի միջև համագործակցության մասին։ Հետևյալ որը չինական թերթերը տեղավորեցին չինական կառավարության պլուս Զան Կայ շիի հետ ունեցած զրույցը, վորը հաստատում էր այդ հաղորդումը։ Կոմկուսակցության և Գոմինդանի միջև համագործակցությունը դարձավ հիմքը, հակաճապոնական ազգային ճակատի առանցքը Չինաստանում։

Չինական ժողովրդի ամենալայն խավերը ուրախությամբ վողջունեցին հակաճապոնական միասնական ազգային ճակատի ստեղծմանը: Միանալով, չինական ժողովուրդն իր ամբողջ ուժերը ներդրեց պայքարի մեջ ընդդեմ ճապոնական հափշտակիչների:

Կարմիր Բանակը վերակազմակերպվեց դառնալով 8-րդ ազգային— հեղափոխական բանակ և մտավ այն դին ված ուժերի կազմի մեջ, վորոնք գործում են համաչինական հրամանատարության ղեկավարությամբ: Խորհրդային շրջանը վերակազմակերպվեց, դառնալով Չինական հանրապետության հատուկ շրջան: Ճապոնական հափշտակիչների դեմ պայքարի բոլոր մասերում չինական կոմունիստները ցույց են տալիս անձնազոհության և բարձր հերոսության որինակ:

Իր կողմից չինական կառավարությունը որինականացրեց կոմկուսակցությունը և ներդրավեց նրան ռազմական ու պետական աշխատանքի մեջ: Կոմկուսակցության գործիչները բանակում և պետական ապարատում դրավեցին նշանավոր պաշտոններ: Հակաճապոնական մասսայական կազմակերպությունները, վորոնք առաջ գոյություն եյին Չինաստանում, այժմ լայն ծավալեցին իրենց աշխատանքը:

Ընդհանուր թշնամու դեմ մղվող պայքարի ընթացքում ամսե—ամիս ծավալվում ու ամրանում է հակաճապոնական միասնական ազգային ճակատը Չինաստանում:

ՀԱՓՇՏԱԿԻՉՆԵՐԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ

Գուտերազմի առաջին հատվածում հափշտակիչներին հաջողվեց գրավել չինական կարևոր շրջաններ:

Հյուսիսային Չինաստանում ճապոնական զորքերը Մանջուրիային սահմանակցվող շրջաններից ներխուժեցին չինական տերիտորիայի խորքը: Այնտեղ նրանք գրավեցին մեծ տարածությամբ հող՝ Բեյպին, Տյանցզյան, Տայյուան և այլ քաղաքներով:

Չինական կարևորագույն քաղաքները, այդ թվում յերկրի մայրաքաղաքը— Նանկինը, գտնվում են կենտրոնական Չինաստանում: Գուտերազմն սկսելուց անմիջապես հետո ճապոնացիները ձգտում եյին հենց դեպի այդտեղ: Նրանք իրենց չորենավերից մեծ քանակությամբ զորքեր իջեցրին Շանհայի՝ չինական, խոշորագույն առևտրական և արդյունաբերական կենտրոնի մոտ: Սակայն հափշտակիչներին Շանհայը հաջողվեց գրավել միայն յերկար ու համառ կռվից հետո: Այնուհետև չարժվելով Յանցզիցզյան նավարկելի գետով և նրա ափերով, ճապոնացիները հետ գրավեցին և Նանկինը:

Հետագայում ճապոնացիներին հաջողվեց միացնել իրար Հյուսիսային և կենտրոնական ճակատները, անմիջական կապ հաստատելով Հյուսիսային և կենտրոնական Չինաստանում գործող իր զորամասերի հետ: Դրա համար էլ ճապոնական զորքերը հարձակում սկսեցին հյուսիսից հարավ ձգվող յերկաթուղագծի ուղղությամբ՝ Տյանցզինից Պուկոու: Հարձակումը կատարվում էր միաժամանակ հյուսիսային և հարավային գծամասերում,— Հյուսիսային Չինաստանում գործող

ճապոնական զորամասերը ընդառաջ գնացին Կենտրոնական ճակատից յեկող երենց զորամասերին:

Միացնելով Հյուսիսային և Կենտրոնական ճակատները՝ հափշտակիչները նոր հարձակում կատարեցին Յանցզիցզյան գետի ուղղությամբ Ուխանի վրա: Ուխան ե կոչվում յերեք քաղաքների շրջանը,— Խանկոու, Ուշան և Խանյան, վորոնք ընկած են իրար կից՝ Յանցզիցզյան գետի յերկու ափերին: Ճապոնական հարձակումը Ուխանի վրա սկսվեց հունիսի կեսերին և տեվեց մինչև հոկտեմբերի յերկրորդ կեսը: Տեղական պայմանները նպաստեցին հարձակվողներին: Հարձակման պըլխավոր գիծն եր Ջրառատ լայն Յանցզիցզյան գետը, վորն ընդհուպ մինչև Ուխանը նավարկելի յե ծովային նավերի համար: Ճապոնացիները գետի վրայով ճակատի դծով նետեցին զորքեր, գնամթերքներ և սննդամթերքներ: Յեվ այնուամենայնիվ, հափշտակիչներին տիրանալ Ուխանին հաջողվեց միայն չորս և կես ամիս անընդհատ կռվից հետո: Այդ կռիվների ընթացքում ճապոնական բանակը կորցրեց ավելի քան 300 հազար սպանվածներ և վիրավորներ:

Ճապոնացիների կողմից Ուխանի գրավմանը նախորդեց խոշոր բանակի հարավային Չինաստան տեղափոխելը: Ռազմական գործողությունները փոխադրելով յերկրի հարավը, ճապոնացիները գրավեցին այնտեղ Կանտոն խոշոր քաղաքը:

Իրենց յուրաքանչյուր մասնակի հաջողությունից հետո ճապոնական գեներալները անվերջ սպասում եյին, վոր չինական կառավարությունը հաշտություն

60608-67

կինդրի և պատրաստակամություն կհայտնի ընդունել հափշտակիչների առաջարկած բոլոր պայմանները:

Սակայն հափշտակիչների զորքերի կողմից առանձին խոշոր քաղաքների և շրջանների գրավմանը վորպես պատասխան չինական ժողովուրդը միայն ավելի յե համախմբում իր շարքերը: Անցնում են չարաթներ, ամիսներ: Անցավ պատերազմի առաջին տարին: Իսկ չինացիները վոչ միայն հաշտություն չեն խնդրում, այլ և պատերազմ են մղում աճող համառությամբ:

Ճապոնական գեներալների բոլոր հաշիվները՝ արագ ու թեթև կերպով հաղթելու համար Չինաստանին, հերքվեցին կյանքով: Զնայած նշանակալից տերիտորյալ գրավումներին, ճապոնական ռազմամոլները այժմ հեռու յեն հաղթանակից, քան պատերազմի առաջին որերին: Չինաստանի պաշտպանները իրենց տրամադրության տակ դեռ ունեն լայնածավալ տարածություններ և մարդկանց մեծ բազմություն: Դա թույլ և տալիս չինական բանակին համառ պայքար շարունակել ոտաստերկրյա հարստահարողների դեմ, չնայած մի շարք կարևոր շրջանների կորստին:

Տերիտորյալ գրավումները միշտ չեն, վոր տանում են վերջնական հաղթանակի: Հայտնի յե, որինակ, վոր անցյալ դարի սկզբներին Ֆրանսիական իմպերատոր Նապոլեոնն իր ժամանակի համար հսկայական բանակով հարձակվեց Ռուսաստանի վրա և գրավեց նրա նշանակալից մասը, Ֆրանսիական հորդաները խուժեցին Մոսկվա՝ «կիզված հրդեհով»: Սակայն ռուսական մեծ ժողովուրդը պայքարի յելավ և վռնդեց Նապոլեոնին: Ֆրանսիական իմպերատորը փախավ Մոսկ-

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ZUUՈ-Арм ССР
Д. им. А. Мясникяна

վայից՝ կորցնելով ճանապարհին իր զորքերի հետ միասին և իր փաքը: Ցերբ Նապոլեոնը մտավ ռուսական հողը, նա իր հետևից բերեց կես միլիոնանոց մի բանակ, իսկ Ռուսաստանից փախստի ժամանակ նրան ուղեկցում էր մոտ 30 հազար մարդ միայն:

Նույնը կարող է պատահել Չինաստանում կապը կլուրած ճապոնական սամուրայների հետ:

ՃԱՊՈՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՄՈԼՆԵՐԻ ԳԱԶԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ճապոնական ռազմամոլները Չինաստանում ցույց են տալիս իրենց բարբարոսությունը: Սամուրայները պատերազմ են մղում չինական ժողովրդի դեմ դազանային դաժանությամբ:

Ճապոնական զորքերը ֆրոնտներում գործադրում են թունավոր նյութեր: Ճապոնական զինվորները գերիների չեն վերցնում, այլ սպանում են նրանց տեղն ու տեղը: Ճիշտ այդպես էլ հաշիվ են տեսնում նրանք վիրավորվածների հետ: Հափշտակիչների ավազական համատարած կերպով վոչնչացնում է չինական քաղաքներն ու գյուղերը: Ճապոնական ոդաչուները գերադասում են շեղվել չինական ինքնաթիռների հետ ոդային կռվի բռնվելուց: Բայց նրանք մեծ ցանկությամբ ոմբակոծում են չինական խաղաղ ազգաբնակչությանը և սպանում են յերեխաներին, կանանց, ծերերին:

Մինչև 1938 թ. սեպտեմբերը ճապոնացիները Չինաստանում վոչնչացրել են մոտ մեկ միլիոն մարդ խաղաղ քաղաքացիական ազգաբնակչությունից: Պատերազմի առաջին 11 ամիսների ընթացքում ճապոնական ինքնաթիռները չինական քաղաքների վրա կատարել են ավելի քան 2·200 թռիչք:

Մեծ քանակությամբ քաղաքներ ու գյուղեր հափշտակիչների կողմից քանդվել են մինչև հիմքերը: Ավելի քան 30 միլիոն փախստականներ մնացել են անոթևան: Ճապոնական բարբարոսների մոտեցման ժամանակ ազգաբնակչությունը չվարմունքի մեջ փախչում է:

Ճապոնացիների կողմից գրաված շրջանների բնակիչները յենթարկվում են հրեշավոր տանջանքների ու ծաղր ու ծանակի: Ճապոնական զինվորները առանց վորևե պատճառի սպանում են խաղաղ բնակիչներին, թալանում են նրանց տները, հրդեհում են ամբողջ գյուղեր ու քաղաքներ: Ճապոնական զինվորները բռնաբարում են չինացի կանանց: Հափշտակիչները հարազատներից խլում են յերեխաները և ուղարկում են նրանց Կորեյա ու Մանջուրիա, վորպեսզի նրանցից զինվորներ դաստիարակեն՝ իրենց ոժանդակ բանակի համար:

Հափշտակիչներին ամենաանչան գիմադրություն ցույց տալու համար ճապոնացիների կողմից գրավված շրջանների բնակիչները յենթարկվում են դժոխային տանջանքների: Նրանց թռչում են նավթով և կենդանի վառում, խեղդում են հորերում, ծեծում են գազանորեն:

Չինական ազգաբնակչությունը տեսնում է, վոր ճապոնական հափշտակիչները արնածարավ և վոչ մարդկային թշնամիներ են, վորոնք առանց ցնցվելու վոչնչացնում են նրանց, ում վոր տիրապետում են:

ՊԱՐՏԻԶԱՆՆԵՐԸ

Ճապոնական ռազմամոլների գազանություններն էլ ավելի յեն ավելացնում ատելությունը չինացիների սրտերում դեպի այդ ռազմամոլները: Հափշտակիչների թիկունքում ծավալվում են պարտիզանական շարժումները:

Ի պատասխան ճապոնացիների դաժանությունների պարտիզանության են դիմում ամբողջ քաղաքների ու գյուղերի ազգաբնակչությունները— ծեր ու ջահել, տղամարդ ու կին: Ճապոնական զորամասերի արշավանքների դեմ քաղաքներում և գյուղերում ստեղծվում են ինքնապաշտպանական ջոկատներ: Այդպիսի ջոկատների ստեղծմանը ոժանդակում են չինական զորքերը և կառավարական հիմնարկությունները: Այնուհետև այդ ջոկատները կազմում են պարտիզանական շարժումների հիմքը: Պարտիզանների թիվը ավելանում է որըստորե: Միայն հյուսիսային Չինաստանում նրանց թիվը հաշվվում է ավելի քան 300 հազար մարդ:

Պարտիզանները հաճախակի հարձակումներ են կատարում ճապոնացիների կապի գծի վրա, քանդում են ճապոնական ռազմական գնացքների գծերը, դրոհում են հակառակորդի կայազորների վրա, վոչնչացնում են նրա պահեստները: Պարտիզանների գործողությունները հսկայական դժվարություններ են ստեղծում ճապոնացիների համար: Նրանք ստիպված են լինում խոշոր ուժեր պահել դրավված քաղաքներում, յերկաթուղային կայաններում, յերկաթուղագծերի ուղղությամբ: Այդ ուժերը դուրս են մնում ճակատի անմիջական պայքարից: Պարտիզանները առանց հոգնության անհանգստացնում են ճապոնական կայազորներին, հյուծում և ուժասպառ են անում նրանց՝ անընդհատ յելույթներով:

Ճապոնական կայազորները զավթված շրջաններում այնքան են վախենում պարտիզանների գործողություններից, վոր սիրտ չեն անում հեռու գնալ քաղաքներից և յերկաթուղագծերից: Պարտիզանները դանվելով ճապոնական բանակի թիկունքում պահում են իրենց ձեռքում ամբողջ դավառներ: Հյուսիսային Չինաստանում Խերեյ, Շանսի և Զախար նահանգների մոտ տեղական չինական ազգաբնակչությունը՝ չինական 8-րդ ժողովրդա— հեղափոխական բանակի ողնությամբ պահում է մի հսկայական շրջան, բաղկացած 40 դավառից, վորտեղ ապրում են 10 միլիոն մարդ:

Հափշտակիչների դեմ մղվող պատերազմում պարտիզանները ցուցաբերում են առանձնակի մեծ հերոսություն և անձնազոհություն: Ահա որինակ Պուտանա քաղաքին մոտ դտնվող վոչ շատ մեծ գյուղում 60 տեղական գյուղացի հարձակվեցին ճապոնական մի ջոկատի վրա, վորը բաղկացած եր 100 մարդուց, Պարտիզաններին հաջողվեց գերի վերցնել ջոկատը և զինվել ճապոնացիներից խլած զենքերով:

Պարտիզանական ջոկատները մեծ վնաս են հասցնում ճապոնացիներին: Այսպես, սեպտեմբերի վերջին պարտիզանական ջոկատը հարձակվեց Նանկինի մոտ գտնվող ճապոնական ողանավակայանի վրա, ոպանելով ողանավակայանի պահակներին, պարտիզանները վոչնչացրին մի քանի տասնյակ ռազմական ողանավեր:

Ասելանարար ճապոնական հափշտակիչները ըն-


ՄՈՆՂՈԼԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՉԻՆԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԵԶ
ԽՍՀՄ ՊԵՏ. ՍԱՀՄԱՆՆԵՐ
ՈՏԱՐ. ՊԵՏ. ՍԱՀՄԱՆՆԵՐ
ՉԻՆԱՍՏԱՆԻ ՊՐՈՎԻՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐ
ՈՏԱՐ ՊԵՏ. ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐ
ԳԱՂՈՒՐՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ
ՉԻՆ. ՊՐՈՎԻՆՑ. ԿԵՆՏՐՈՆՆԵՐ
ԱՅԼ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ
ԳԼԽԱՎՈՐ ՅԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐ
ՄԱՍՇՏԱԲ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐ
ՊԵՏՈՒԹ. ՏԻՐԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
(ԲՐԻՏ.)_ՄԵԾ_ԲՐԻՏԱՆԻԱՅԻ
(ՖՐ)_ՖՐԱՆՍԻԱՅԻ
(ՊՈՐՏ.)_ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅԻ
(ՖԱՊ)_ՖԱՊՈՆԻԱՅԻ

կնում են կարծելք թե կախարդական շրջանի մեջ, ամենուրեք նրանց շրջապատում են ֆրոնտները, թիկունքը նման է դառնում ճակատին: Ճապոնական գեներալները կամ թիկունքից զորքերը նետում են ճակատ, կամ ընդհակառակը, ճակատից զորամասեր են հանում թիկունքում պարտիզանական ջոկատների դեմ պայքարելու համար: Պարտիզանական ջոկատները բազմապատկվում են, աճում: Պարտիզանները մարտական փորձ են կուտակում և դառնում են ավելի քան վտանգավոր թշնամի հափշտակիչների համար: Շատ պարտիզանական ջոկատներ միանում են և մշտական կապ հաստատում չինական բանակի հրամանատարության հետ:

Ճապոնական ոկուպանտները նստել են գավթած շրջաններում ինչպես հրաբխի վրա: Մասսայական պարտիզանական շարժման զարգացումը տատանում է նրանց վոտքերի տակի հողը:

ՉԻՆԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԱՃՆ ՈՒ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Չինական բանակի զորամասերը աճեցին ու ամրացան ճապոնական հափշտակիչների դեմ մղվող պատերազմի ընթացքում: Այդ բանակը դարձել է համախմբված, նրա գլխին կանգնած է միասնական հրամանատարություն:

Առաջներում չինական զորամասերը կազմված էին վարձու զինվորներից: Այժմ ընդհանուր զինվորական ծառայություն անցկացնելուց հետո ուժեղ կերպով փոխվեց այդ զորամասերի կազմը: Բանակ եկան մեծ քանակությամբ բանվորներ, գյուղացիներ, ուսանողներ, մտավորականներ: Ստեղծվեցին նոր դիվիզիաներ, վորոնք աչքի են ընկնում բարձր մարտունակությամբ: Հրամանատարական կազմի շարքերը մաքրվում են դավաճաններից և անպետք զինվորական պետերից. նրանց տեղը առաջ են քաշվում նոր հրամանատարներ, վորոնք մինչև վերջ հավատարիմ են իրենց ժողովրդին:

Չինական բանակի զորամասերում դրվում է քաղաքխատանքը: Համաչինական բանակի քաղբաժնի պետն է գեներալ Ջժեն Ջենը, վորը Գոմինդանի նշանավոր գործիչ է, նրա ողնաշարն է կոմկուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ Ջժու Են—Լայը: Քաղաքական աշխատանքը զինվորների և հրամանատարների մեջ բարձրացնում է մարտական վոգին և կարգապահությունը:

Չինական զորքերը քանի գնում ավելի լավ են յուրացնում ռազմական տեխնիկան: Հրամանատարները սովորում են ավելի խելացի կերպով ղեկավարել կռիվները: Սկզբնական շրջանում չինական հրամանատարությունը գործադրում եր պատերազմի վարման վոչ բավականաչափ ճկուն մեթոդ,— չինական զինվորները գրավում էին վորոշակի դիրքեր և փորձում էին այդ դիրքերից հետ մղել հակառակորդի գրոհները: Պայքարի նման մեթոդը, վորը անվանվում եր պաշտպանական դիրքային պատերազմ, հնարավորություն եր տալիս հակառակորդին ոգտագործելու իր բարձր տեխնիկան, չինական դիրքերը յենթարկվում էին յերկարատև հրետանային և ոդային ռմբակոծության, վորից հետո ճապոնական հետևակը տանկերի ոգնությամբ գրոհի եր գնում կիսակործան ամրությունները, մտայնադրծներ: Ստեղծվեցին նոր դիվիզիաներ, վորոնք աչքի են ընկնում բարձր մարտունակությամբ: Հրամանատարական կազմի շարքերը մաքրվում են դավաճաններից և անպետք զինվորական պետերից. նրանց տեղը առաջ են քաշվում նոր հրամանատարներ, վորոնք մինչև վերջ հավատարիմ են իրենց ժողովրդին:

Չինական բանակի զորամասերում դրվում է քաղաքխատանքը: Համաչինական բանակի քաղբաժնի պետն է գեներալ Ջժեն Ջենը, վորը Գոմինդանի նշանավոր գործիչ է, նրա ողնաշարն է կոմկուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ Ջժու Են—Լայը: Քաղաքական աշխատանքը զինվորների և հրամանատարների մեջ բարձրացնում է մարտական վոգին և կարգապահությունը:

Չինական զորքերը քանի գնում ավելի լավ են յուրացնում ռազմական տեխնիկան: Հրամանատարները սովորում են ավելի խելացի կերպով ղեկավարել կռիվները: Սկզբնական շրջանում չինական հրամանատարությունը գործադրում եր պատերազմի վարման վոչ բավականաչափ ճկուն մեթոդ,— չինական զինվորները գրավում էին վորոշակի դիրքեր և փորձում էին այդ դիրքերից հետ մղել հակառակորդի գրոհները: Պայքարի նման մեթոդը, վորը անվանվում եր պաշտպանական դիրքային պատերազմ, հնարավորություն եր տալիս հակառակորդին ոգտագործելու իր բարձր տեխնիկան, չինական դիրքերը յենթարկվում էին յերկարատև հրետանային և ոդային ռմբակոծության, վորից հետո ճապոնական հետևակը տանկերի ոգնությամբ գրոհի եր գնում կիսակործան ամրությունները

ների դեմ և սովորաբար առաջնություն էր տանում։ Այժմ չինական հրամանատարությունը խելացի ձևով զուգակցում է զինքային պատերազմը շարժական գործողությունների, հակադրոհների ու հարվածների հետ՝ թևի ու թիկունքի ուղղությամբ։

Պատերազմը սկսվելու ժամանակից նկատելիորեն բարելավվել է չինական բանակի սպառազինումը։ Չինաստանի խորքում գտնվող շրջաններում կառավարության միջամտության շնորհիվ, հաջողությամբ ծավալվում է ռազմական արդյունաբերությունը։ Չինական կառավարությունը շատ դենքեր է գնել արտասահմանից։ Չինական զինվորներն այժմ նշանակալի չափով ավելի լավ են զինված քան պատերազմի առաջին օրերին։

Չինական ավիացիան ոգևորում է առանձին սիրով ու յերախտագիտությամբ՝ յերկրի ժողովրդական մասսաների կողմից։ Չինական ռազմաչունները հաջողությամբ տիրապետում են ավիացիոն տեխնիկային։ Ոդային ընդհարումների ժամանակ նրանք անփոփոխ կերպով հաղթահարում են ավելի բազմաքանակ հակառակորդների, ցուցաբերելով բարձր հերոսություն։ Հայտնի յե այն փաստը, յերբ չինական ռազմաչու Շեն Զուն—Գույը, տեսնելով, վոր իր ինքնաթիռը վնասվել է, իր մեքենայի հետ առաջ նետվեց ճապոնական ռազմական նավի տախտակամածի վրա և նավը վառվեց չինական հերոսական ռազմաչուի հետ մեկտեղ։

Չինական մարտիկները կռվում են առանձնակի քաջությամբ։ Նրանք դիտեն, վոր արդարացի պատերազմ են մղում, պաշտպանելով իրենց հայրենիքը։

Իրենց ժողովրդին։ Դա նրանց ուժ է տալիս աներկյուղ նայել մահվան աչքերին, պայքար մղելով մինչև առամները զինված թշնամու դեմ։

Վորքան կռվում և փորձառու յեն դառնում չինական զորքերը, այնքան հաճախ են զրացնող հարվածներ հասցնում ճապոնական բանակին։ Արդեն Տյան—Ցզին—Պուկոու յերկաթուղու վրա տեղի ունեցած գործողությունների ժամանակ չինացիները Տեյերշժուժանի տակ ճապոնացիների նկատմամբ լուրջ հաղթանակ ձեռք բերին, այդ կռվում ճապոնական շատ զինվորներ և սպաներ ընկան։ Ուխանի մոտակայքում տեղի ունեցած կռիվներում չինացիները Դզան յերկաթուղային կայարանի մոտ հակառակորդի նկատմամբ ձեռք բերին նշանակալից հաղթանակ։ Չինացիներին հաջողվեց շրջապատել այնտեղ 20 հազարանոց ճապոնական ջոկատը և ամբողջովին վոչնչացնել նրան, ամբողջ ջոկատից միայն 200 ճապոնացիների հաջողվեց դիշերային մթության ողնությամբ փախչել սարերը։

Սմոս—ամիս աճում ու կռվում են պայքարում՝ չինական ժողովրդի զինված ուժերը։

ԺՈՂՈՎՐԴԱ-ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ 8-ՐԴ ԲԱՆԱԿԸ

Ճապոնական հափշտակիչների դեմ մղվող պատերազմում խոշոր դեր է խաղում 8-րդ ժողովրդա-հեղափոխական բանակը, վորը ստեղծվել է Չինաստանի նախկին Կարմիր Բանակի զորամասերից։

Հատկապես 8-րդ ժողովրա – հեղափոխական բանակն առաջին անգամ սկսեց կիրառել պատերազմի

վարման նոր միջոցներ։ 8-րդ բանակի որինակը զգալիորեն ստիպեց չինական զորքերին հրաժարվել քիչ ձեռնտու պաշտպանական դիրքային պատերազմից։

8-րդ բանակի զորամասերի հայտնվելն իսկ ճակատում, Շանսի նահանգում, կապված և չինական զորքերի՝ հակառակորդի նկատմամբ տարած առաջին խոշոր հաղթանակի հետ։ Ճապոնական զորքերը Շանսիում հետապնդում էին նահանջող 13-րդ չինական բանակին և ընդհարվեցին ճակատ չտալող 8-րդ բանակի զորամասերի հետ։ Պինինկուան-Խունյուան տեղամասում կատաղի կռիվ տեղի ունեցավ։ 8-րդ բանակի մարտիկները տապալեցին ճապոնական ընտրովի զորքերի մի խումբ, որը հրամանատարում էր գեներալ Իտագակին, ճապոնացիներն այդ կռվում կորցրին 5 հազար մարդ սպանված և գերված, մի քանի տասնյակ տանկեր, 60 ավտոմեքենաներ, հրետանային զենքեր և շատ ռազմամթերքներ։ Այսպիսով 8-րդ բանակը քամուն տվեց կեղծ առասպելները ճապոնական զենքի «անհաղթելիության» մասին։

Շանսի նահանգում տեղի ունեցած հետագա կռիվներում 8-րդ բանակի զորամասերը քիչ ամուր հարվածներ չհասցրին ճապոնացիներին։ Յուանպինի տակ 8-րդ բանակի զորամասերի հետ տեղի ունեցած ընդհարման ժամանակ, ճապոնացիները կորցրին 3 հազար մարդ և 22 տանկ։ Մի ուրիշ անգամ 8-րդ բանակի ջոկատներից մեկը ճեղքեց ճապոնական զորքերի գասավորությունը և հարձակվեց Նին-ուի ճապոնական ոգանավակայանի վրա, որտեղ վոչնչացվեցին ճապոնական 24 ոգանավեր, որոնք չեյին կարողացել ժամանակին ոդ բարձրանալ։

Յերբ ճապոնական բանակը չարժվեց Շանսի նահանգի հարավային մասը և գրավեց այդ նահանգի գլխավոր քաղաք Տայյուանը, 8-րդ ժողովրդա-հեղափոխական բանակը չնահանջեց չինական այլ զորամասերի հետ միասին։ Նա մնաց Շանսիում և ճապոնացիների թիկունքում ակտիվ գործողություններ ծավալեց։

8-րդ չինական բանակն իր անցյալում պարտիզանական պայքարի վարման մեծ փորձ ունի։ Այդ փորձը նա ոգտագործեց ճապոնացիների թիկունքում լայն պարտիզանական գործողությունների ծավալման համար։ Բանակի քաղաժինները, նրա կոմիսարները ազգաբնակչության մեջ ագիտացիոն մեծ աշխատանք են տանում բացատրելով նրանց ոտարյերկրյա հափշտակիչների դեմ ազատագրական պատերազմի խնդիրները։ 8-րդ բանակի զորամասերն ոգնում են ազգաբնակչությանը ինքնապաշտպանության ջոկատներ ստեղծելու, ամեն կերպ աջակցելով այդ ջոկատների գործողություններին։

8-րդ ժողովրդա-հեղափոխական բանակը մասսայական պարտիզանական շարժման հիմնադիրն է Չինաստանում։ Այդ շարժման զարգացման գծով կատարած իր աշխատանքով նա որինակ ցույց տվեց չինական մյուս զինվորական մասերին։

8-րդ բանակը շատ լայն աշխատանք ծավալեց հակառակորդի զորքերի մեջ։ Ճապոնական լեզվով հրատարակվող հատուկ թերթիկներում 8-րդ բանակի քաղաժինները հակառակորդի զինվորներին ա-

սում են ամբողջ ճշմարտությունը պատերազմի մասին: Ճապոնական սպաները հավատացնում են իրենց զինվորներին, որ չինական բանակը դերիների հետ վարվում է այնպես խստությամբ, ինչպես իրենք, 8-րդ բանակի քաղաքաժինները իրենց թերթիկներում բացատրում են, որ չինացիները չեն հատուցում հակառակորդի գերի վերցրած զինվորին: 8-րդ բանակի աշխատանքը հակառակորդի գորքերի մեջ բերում է աչքի ընկնող արդյունքներ:

8-րդ ժողովրդա – հեղափոխական բանակի գործունեությունները վարում են հրաշալի գորավարներ,— չինական կոմկուսակցության ղեկավար՝ Մաո Ցզե –դուն, Ջժու Դեն, Պեն Դե –Խուայան, Խո Լուն և ուրիշները: Չինական ժողովուրդը վողեվորությամբ է արտասանում նրանց պանծալի անունները:

Վերջին ժամանակներս կենտրոնական Չինաստանում 8-րդ բանակի սրինակով ստեղծվել է 4-րդ ժողովրդա–հեղափոխական բանակ: Այդ բանակը կազմակերպվեց նախկին կարմիր պարտիզանական ջոկատներից, որոնք գործում էին կենտրոնական Չինաստանում: 4-րդ ժողովրդա–հեղափոխական բանակը կռվում է այժմ ճապոնական գորքերի թիկունքում–Նանկինի —Շանհայի շրջանում, գործադրելով պայքարի այն մեթոդները ինչ գործադրում է 8-րդ բանակը:

8-րդ ժողովրդա– հեղափոխական բանակը դեպի իրեն է դարձրել ամբողջ Չինաստանի ժողովրդական մասսաների հարգանքն ու սերը:

Ո՞ՒՄ Է ՁԵՌՆՏՈՒ ՅԵՐԿԱՐԱԾԳՎՈՂ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ճապոնական զեներալների խելացնոր յերազները – ջախջախել Չինաստանը կարճատև պատերազմում–չիրականացան: Պատերազմն ավելի ու ավելի յե յերկարաձգվում: Յերկու պատերազմող կողմերից ո՞ւմ է ձեռնտու այդ յերկարաձգումը:

Առաջին հայացքից կարող է թվալ, որ պատերազմի յերկարաձգումը կարող է մեծ վնաս բերել Չինաստանին, քան թե Ճապոնիային, այնքան, որքան պատերազմը տարվում է չինական տերիտորիայի վրա: Սակայն այդպիսի մտածելակերպը կլիներ մակերեսային և անհիմնավոր:

Ճապոնիան նախապես պատրաստվել է Չինաստանի դեմ հափշտակիչ պատերազմի: Նրա բանակը, նրա ծովային և ոդային նավատորմիղը հասցված էր հսկայական չափերի: Նրա արդյունաբերությունը նախորոք փոխադրված էր ռազմական ռելսերի վրա: Չինաստանը գտնվում էր այլ դրության մեջ: Նա պատրաստ չէր պատերազմի, չկար միասնական, մի ընդհանուր ղեկավարության շուրջը համախմբված բանակ, դրեթե չուներ ռազմական արդյունաբերություն: Միայն պատերազմի ընթացքում կազմակերպվեց միասնական չինական բանակը , որը համախմբված է մի կենտրոնական հրամանատարության շուրջը: Չինական բանակի սպառազինումը ևս սկսվեց լավանալ և լրացվել միայն պատերազմական գործողությունների ընթացքում: Չինական կառավարու-

թյունը վերջին ժամանակներս ռազմական ապրանքաշրջանառություն կատուցելու գործում հասավ զգալի հաջողությունների։

Պատերազմի առաջին ամիսներին Ճապոնիան իր կողմն ուներ մեծ գերակշռություն, բայց պատերազմական գործողությունների յերկարաձգման պատճառով, այդ գերակշռությունն անվիճելի պակասում է։

Վորքան ավելի ուժեղ է դառնում չինական բանակի դիմադրությունը, այնքան ավելի չատանում են ճապոնական կորուստները։ Պատերազմի առաջին տարվա ընթացքում ճապոնական բանակը կորցրել է մոտ 350 հազար մարդ սպանված և վիրավորված։ Ուխանի վրա հարձակվելու հետևյալ 4½ ամիսների ընթացքում ճապոնացիները կորցրեցին ավելի քան 300 հազար սպանված և վիրավորված մարդ։

Պատերազմի մեկ տարվա ընթացքում ճապոնական ավիացիան կորցրեց Չինաստանում մոտ 600 մարտական ինքնաթիռ։ Ծովային նավատորմիղը նույն այդ ժամանակաշրջանում կորցրեց ավելի քան 30 ռազմական նավ։

Չինաստանում տրված մեծ կորուստները ստիպում են հափշտակիչներին ճապոնիայում անցկացնել մոբիլիզացիան մոբիլիզացիայի հետևից։ Այժմ արդեն ճապոնական ռազմամոլները զենքի տակ են դրել միլիոն ու կեսանոց մի բանակ, մինչդեռ մինչ պատերազմը ճապոնական բանակի թվային քանակը հաշվում եր 380 հազար մարդ։ Տղամարդիկ Ճապոնիայում կազմում են 35 միլիոնից պակաս, իհարկե, ճապոնիան դեռ չի սպառել մարդկային իր ռեզերվները,

սակայն յուրաքանչյուր նոր մոբիլիզացիա մեծ դժվարություններ է առաջացնում և յերկրի անտեսությունն ավելի ու ավելի յե տուժում աշխատունակ տղամարդկանց պակասից։ Այդ նույն ժամանակ Չինաստանի հսկայական ազգաբնակչությունը անսահմանափակ հնարավորություններ է ընձեռնում չինական բանակի համալրման համար։ Չինական իշխանությունները սովորեցնում են յերկրի մարտունակ վոգջ ազգաբնակչությանը տիրապետելու զենքին։

Չինական ժողովուրդը, գիտե, վոր պատերազմ է մղում ճշմարիտ ու սրբազան գործի համար,— հարազատ հողը հափշտակիչներից մաքրելու համար։ Այդ գիտակցությունը համախմբում է չինացիներին հակաճապոնական միասնական ազգային ֆրոնտի մեջ։ Նույն այդ գիտակցությունն ոգնում է ազգաբնակչությանը տանել զրկանքներ, վորոնք առաջանում են պատերազմը չինական տերիտորիայում վարելու հետևանքով։

Ճապոնական ռազմամոլների գաղանությունը բարձրացնում է իրենց դեմ ամբողջ Չինաստանի համաժողովրդական ցասումը։ Աճում է պարտիզանական հզոր շարժումը ճապոնացիների թիկունքում։ Ճապոնական իմպերիալիստները մղում են անարդարացի, հափշտակողական պատերազմ։ Յեվ վորքան ավելի յե յերկարում այդ պատերազմը, այնքան շատ մարդիկ հենց Ճապոնիայում սկսում են հասկանալ պատերազմի իսկական եությունը։ Աշխատավոր մասսաների դրության պայմանները որստորե ավելի յե դժվարանում։ Անչափ բարձրացել են գը-

ները։ Նեն բավականացնում աննդամթերքները և լայն սպառման առարկաները։ Շատ ընտանիքներ իրենց կերակրողներին ուղեվորել են բանակ, քիչ մայր ու կանայք չկան, վորոնք տեղեկություն են ստացել այն մասին, վոր իրենց մոտիկները մահացել են կամ խեղանդամվել են մարտի դաշտում։ Այս ամենն Ճապոնիայում մարդկանց դրդում են խորհել, թե ում է արդյոք հարկավոր չինական ժողովրդի դեմ մղվող այս պատերազմը։

Ճապոնական իշխանություններն ամենից շատ վախենում են այդպիսի մտածմունքներից։ Իզուր չէ, վոր նրանք պատերազմի պատրաստվելով, նույնիսկ հատուկ որենք հրատարակեցին ընդդեմ «վտանգավոր մտքերի»։ Սակայն միայն Սամադուր — գեներալները կարող են յերևակայել, վոր իրենք ի վիճակի են արգելելու ժողովրդին մտածելու ու խորհելու։

Պատերազմի դեմ շարժումը Ճապոնիայում ավելի ու ավելի լայն ծավալ է ընդունում։ Վոստիկանությունը հարյուրավոր ու հազարավոր ձերբակալություններ է կատարում, բայց նա ուժ չունի կանգնեցնել այդ շարժման աճը։ Նույնիսկ գործող բանակում հակապատերազմական ագիտացիա յե մղվում, սպանված ու վիրավորված ճապոնական շատ զինվորների մոտ չինացիները գտել են հակապատերազմական թերթիկներ։ Այդ թերթիկներից մեկում ասված է.

«Թանկագին զինվորներ, միլիտարիստները ուզարկում են մեզ անպայման կործանվելու։ Մենք պետք է ապստամբենք և չինական զինվորների

հետ դաշն կնքած հարվածենք մեր իսկական թշնամուն —ճապոնական միլիտարիստներին ու կապիտալիստներին»։

Հափշտակողական պատերազմի վրա Ճապոնիայի կատարած ծախսերը հասել է հսկայական չափերի։ Նա պատերազմի վրա ամեն ամիս ծախսում է մոտ 900 միլիոն յեն (ավելի քան մեկ միլիարդ 350 միլիոն ռուբլի)։ Ճապոնական գանձարանը հալվում է։ Հափշտակիչներն արդեն հարկավոր միջոցներ չունեն, վորպեսզի ապահովեն իրենց արդյունաբերությունը արտասահմանյան հումքով։ Ճապոնիայի տնտեսությունը մատակարարման անկանոնություն է կրում։ Յերկրի ամբողջ կյանքը ցնցված է մինչև հիմքերը։ Դրան համապատասխան աճում է անբավականությունը պատերազմի նկատմամբ աղգաբնակչության լայն մասսաների մեջ։

Այդ պատճառների հետևանքով յերկարաձգվող, յերկարատև պատերազմը թուլացնում է ճապոնական իմպերիալիզմին, շարժում նրա հիմքերը։ Ընդհակառակը, յերկարաձգվող պատերազմը ավելի ուժեղ է համախմբում չինական ժողովրդին, տալիս է Չինաստանին անհրաժեշտ ժամանակ իր ռազմական հզորության ամրացման համար։

ՃԱՊՈՆԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ՏՐՈՑԿԻՍՏԱԿԱՆ ԼՐՏԵՍՆԵՐԸ

Չինական ժողովրդի գլխավոր լողունգներից մեկն է ճապոնական հետախուզության տրոցկիստական լրտեսների դեմ պայքարը։ Տրոցկիստների մի կույտ, վորը վարձատրություն է ստանում ճապո-

նական հետախուզությունից, ծախում է չինական ժողովրդին ճապոնական իմպերիալիզմին: Ճապոնական հետախուզության հանձնարարությամբ չինական տրոցկիստները զբաղվում են լրտեսությամբ, դիվերսիոն և տեռորիստական ակտերով:

Պատերազմն սկսվելուց անմիջապես հետո տրոցկիստական բանդիտների շայկան փորձեց խռովություն բարձրացնել չինական Գուանսի նահանգում: Այդ շայկայի գլուխը կանգնած էր Ցուան դուս-տոն — տեղական կառավարության քարտուղարը: Դավաճանները փորձում էին անկարգություններ սարքել չինական բանակի թիկունքում, վորպեսզի հեշտացնեն ճապոնացիների հարձակումը ճակատում: Սակայն դավադրությունը բացվեց: Չինական իշխանությունները ձերբակալեցին և գնդակահարեցին Գուանսի նահանգի տրոցկիստական դավադրության 12 մասնակիցների:

Ավելի ուշ, չինացիների խումբը մերձֆրոնտյան գոտում- Լինֆին քաղաքում բռնեց տրոցկիստական բանդիտ Ջժան Մուո -Տաոին, վորը ապդանշաններ էր տալիս ճապոնական ինքնաթիռներին: Լրտեսի բնակարանը ստուգելու ժամանակ հայտնաբերվեց դաղտնի ռադիոկայան, վորի ոգնությամբ նա կապ էր պահում ճապոնական հետախուզության հետ, ռադիոկայանի կողքին Ջժան Մուո — Տաոի բնակարանում հայտնաբերվեց 8 արկղ ձեռքի ռումբ, և շատ ռեվոլվերներ: Մինչ այդ տրոցկիստական բանդիտ Ջժան Մուո - Տաոն կազմակերպեց չինական

նշանավոր գործիչ Վան Ի Ցզիի սպանությունը, վորը հակաճապոնական միասնական ճակատի անդամ կոմունիստ էր ու ճապոնական իմպերիալիզմի դեմ մարտիկ:

Այդ սրինակներից կարելի է հասկացողություն կազմել Չինաստանում ճապոնական հետախուզության տրոցկիստական լրտեսների կատարած գազրելի ու արյունոտ հանցագործությունների մասին:

Ճապոնական հետախուզությունը լայն կերպով ոգտվում էր իր տրոցկիստական լրտեսների ծառայություններից: Նա առանց հիմքի չէ, վոր տրոցկիստներին համարում է լրտեսության, վնասարարության, տեռորիստական գործողությունների գծով վարպետներ: Ցերբ ճապոնական հետախուզությունը Բեյպինում բաց արեց հատուկ կուրսեր լրտեսներ պատրաստելու համար, նա տրոցկիստներին նշանակեց այդ կուրսերում... վորպես «դասատուների»:

Իրենց տերերի – ճապոնական իմպերիալիստների հրամանով, տրոցկիստները պատրաստ են գործելու ցանկացած կեղծիք, ցանկացած հանցանք: Տրոցկիստական բանդիտները ատում են ժողովրդին, վորը պայքարի է ելել իր անկախության համար: Նրանք փորձում են հարվածել չինական ժողովրդի մեջքին:

Ճապոնական հետախուզության տրոցկիստական լրտեսների ջանքերը ուղղված են առանձնապես ամրապնդվող հակաճապոնական ազգային ֆրոնտի դեմ: Իրենց պրովոկացիաներով և խարդախություններով նրանք ամեն կերպ ձգտում են խափանել կո-

մունիստական կուսակցության և Գոմինդանի միջև յեղած համագործակցությունը: Սակայն չինական ժողովուրդը փչրում է տրոցկիստական սրիկայի նենգ գործունեությունները:

Տրոցկիստները— ինչպես ամբողջ աշխարհի ժողովրդական մասսաների, այնպես եվ չինական մեծ ժողովրդի կատաղի թշնամիներն են: Միայն վճռականորեն խեղդելով ճապոնական հետախուզության տրոցկիստական ագենտուրան իր թիկունքում, չինական ժողովուրդը կարող է ֆրանտում իր թշնամու նկատմամբ առաջնություն շահել:

ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԻ ՄԻԱՁԵՎ ՅԵՂԱԾ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ճապոնական ներխուժումը Չինաստան ուժեղ կերպով սրեց հակասությունները իմպերիալիստական պետությունների միջև՝ Հեռավոր Արեվելքում: Ճապոնիայի ռազմական գործողությունները, ըստ եության, հարված են հասցնում ուրիշ կապիտալիստական տերությունների շահերին՝ Չինաստանում, առանձնապես Անգլիայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների (ԱՄՆ) շահերին: Անգլիան և Ամերիկայի Միացյալ Նահանգները ուժեղ կերպով շահագրգռված են չինական շուկայով և չինական հումքով:

Ցերկու տերություններն եվ ներգրել են հակայական փող Չինաստանում ունեցած իրենց արդյունաբերական և առևտրական ձեռնարկություններում:

Չինաստանի հետ ունեցած կապերի կորուստը կհասցներ խոշորագույն վնաս Անգլիայի և ԱՄՆ-ի կապիտալիստներին:

Միանգամայն պարզ է, վոր յեթե ճապոնացիները հափշտակեն Չինաստանը, ապա նրանք վոչ վոքի հետ չեն ցանկանա բաժանել իրենց ավարը և գուրս կշպրտեն այնտեղից անգլիական և ամերիկական կապիտալիստներին:

Այդ մասին և վկայում Թոկիոյ Մանջուրիայի ուրինակը: Այնքան ժամանակ, վորքան ճապոնացիները պայքար եյին մղում Մանջուրիայի գրավման համար, նրանք յերդումնաբար խոստանում եյին, վոր լայնորեն բաց կթողնեն այդ յերկրի դռները անգլիական և ամերիկական կապիտալիստների համար:

Բայց յերբ ճապոնացիները ամուր կերպով հիմնավորվեցին իրենց գրաված տերիտորիայի վրա, այնպես եվ փակեցին «Մանջուրիայի դռները» Անգլիայի և Միացյալ Նահանգների քթի առաջ: Նույնն են ցանկանում անել ճապոնական հափշտակիչները ամբողջ Չինաստանում, յեթե նրանց հաջողվի նրան գրավել:

Ահա թե ինչու Անգլիան և ԱՄՆ-ը տագնապով հետևում են ճապոնական զորքերի առաջխաղացմանը Չինաստանում: Այժմ արդեն ճապոնացիները գրավել են չինական նավահանգիստների ճնշող մեծամասնությունը, այդ թվում կարեվորագույն նավահանգիստներ Շանհայը, Տիանցզինը, և Կանտոնը: Ճապոնական ռազմական նավատորմիղը ողակում է չինական ափը: Դրանով իսկ Ճապոնիան առայժմ պահում է իր ձեռքում չինական արտաքին առևտրի առյուծի բաժնի բանալիները:

Ճապոնիայի յուրաքանչյուր հետագա քայլ Չինաստանում վտանգավոր ու անցանկալի է իմպերիալիստական մրցակիցների համար: Իզուր չեր Անգլիան հաստատորեն բողոքում՝ ճապոնացիների կողմից ռազմական գործողությունները Հարավային Չինաստան տեղափոխելու դեմ, վորի բախտով հատկապես ուժեղ կերպով շահագրգռված է անգլիական իմպերիալիզմը:

Ֆրանսիան ունի իր պատճառները յերկյուղ կրելու ճապոնացիների կողմից Չինաստանը դրավելու գործում, չէ՞ վոր հարավում Չինաստանը սահմանակից է Ֆրանսիական տիրապետության — Հնդկաչինի հետ: Ճապոնացիների կողմից Չինաստանը դրավելու դեպքում հերթի կգրվի և Հնդկաչինը: Արդեն հիմա ճապոնական նավերը վխտում են Հնդկաչինյան ափերի մոտ: Ֆրանսիական կառավարությունը բազմիցս մատնացույց է արել Ճապոնիային, վերջինիս ռազմա-ծովային նավատորմիղի այդ որինակ գործողությունների անցանկալիությունը՝ Ֆրանսիայի համար: Անգլիան և Ամերիկայի Միացյալ Նահանգները նույնպես ունեն կարեվոր տիրապետություններ Խաղաղ ովկիանոսում՝ չինական ափերին մոտիկ:

Ի հարկե, յերբ Անգլիան, ԱՄՆ և Ֆրանսիան ընդունեն ցանկանալի կանդնեցնել Ճապոնայի գրոհը Չինաստանի դեմ, նրանք է վիճակի եյին անել այդ: Ճապոնիան արդեն հիմա ել խոշորագույն դժվարություններ և կրում Չինաստանի դեմ պատերազմելիս: Նա բնավ ել չեր համաձայնվի պայքարել այդ յերեք պետությունների միացյալ ուժերի դեմ:

Սակայն Անգլիայի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի իմպերիալիստները, թեպետ և տուժում են ճապոնացիների բռնի գործողություններից և յերկյուղում են այդ գործողությունների հետագա զարգացումից, այնուամենայնիվ չեն ուզում ոգնել Չինաստանին՝ հափշտակիչների դեմ մղած նրա պայքարում: Բոլոր յերկրների իմպերիալիստները վախենում են միացած ու պայքարի յելած չինական մեծ ժողովրդից: Ճապոնական ֆաշիստական ռազմամոլներին նրանք համրում են ինչ վոր պատվար ընդդեմ ազգային—ազատագրական և բանվորական շարժումների՝ Հեռավոր Արևելքում: Ահա թե ինչու ուրիշ յերկրների իմպերիալիստները, իսկ առանձնապես Անգլիայինը, վոչ միայն չեն պարսպում ճապոնական հափշտակիչների ճանապարհը, այլ և աշխատում են սիրալիորեն պայմանավորվել նրանց հետ:

Անգլիական և ամերիկական կապիտալիստները անդրկուլիսյան բանակցություններ են վարում Ճապոնիայի հետ, քննելով նրա հետ Չինաստանի բաժանման զանազան թալանչիական պլաններ: Անգլիան և ԱՄՆ-ը շարունակում են մատակարարել Ճապոնիային պատերազմը վարելու համար նրան անհրաժեշտ հումույթով: Այսպիսով, նրանք ներողամտաբար են վերաբերվում Ճապոնիայի կողմից չինական ժողովրդի դեմ սարքած կռվին:

Ճապոնական ռազմամոլներն նայելով իրենց իմպերիալիստական մրցակիցների վարքագծին, ել ավելի յեն լկտիանում ու շարժում ընդհանուր պատերազմի ջահը: Ռազմական գործողությունների վերսկսումը Հարավային Չինաստան հատկապես սրում է իմպերիա-

փաստական տերությունների միջև հակասությունները Հեռավոր Արևելքում։

Չի կարելի ճշտորեն ասել, թե ինչպես կծավալվեն հետագայում գործողությունները Հեռավոր Արևելքում։ Սակայն արդեն հիմա պարզ է, որ ճապոնական ռազմամոլները այնտեղ խճճել են կծիկը այնպիսի մի պատերազմի, որը կարող է չսահմանափակվել Չինաստանի սահմաններում։

ՉԻՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԿՀԱՂԹԻ

Չինական Ժողովրդի առաջ պայքարի յերկար ու դժվարին ճանապարհ է ընկած։ Սակայն այդ ճանապարհը միակ ճանապարհն է յերկրի անկախության պաշտպանման, ճապոնական սարկությունից ազատվելու միակ ճանապարհը։ Չինական ժողովրդի հայրենական պատերազմը հափշտակիչների դեմ, ճշմարիտ ու հեղափոխական պատերազմ է։ Չինաստանի ազգային բոլոր ուժերի հետագա համախմբումը հաղթանակի հաստատ յերաշխիք է հափշտակիչների դեմ մղվող պայքարում։ Ճապոնիան յերբեք չի կարող սարկացնել Չինաստանի միացյալ ու համախմբված բազմամիլիոն ժողովրդական մասսաներին։

Ճապոնական հափշտակիչների դեմ Չինական ժողովրդի մղած պայքարին է նվիրված «Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության պատմության» դրքի հրաշալի տողերը, մի դրքի, որը կազմել է ՀԱՄԿ(բ)Կ Կենտկոմի հանձնաժողովը՝ աշխատավորների առաջնորդ և ուսուցիչ ընկեր Ստալինի ղեկավարությամբ։ այդ տողերն ասում են։

«Ի՛ հարկե, չինական ժողովրդի և նրա բանակի հերոսական պայքարն ընդդեմ ճապոնական հափշտակիչների, հսկայական ազգային վերելքը Չինաստանում, մարդկանց ու տերիտորիայի վիթխարի ռեզերվը Չինաստանում, վերջապես, չինական ազգային կառավարության վճռականությունը՝ Չինաստանի ազատագրական պայքարը հասցնելու մինչև վերջ, մինչև հափշտակիչների Չինաստանի սահմաններից լիովին դուրս քշելը,—այս բոլորն անհերկմտորեն խոսում են հոգուտ այն բանի, որ ճապոնական իմպերիալիստները Չինաստանում ապագա չունեն և չեն ել կարող ունենալ»։

Չինական հերոսական ժողովուրդը կհաղթի ճապոնական հափշտակիչներին և դուրս կվռնդի նրան իր հարազատ հողի վրայից։ Ամբողջ աշխարհի աշխատավորները, ամբողջ առաջադեմ մարդկությունը—չինական ժողովրդի կողմն է։

Չինական ժողովրդի համար կա անշահախնդիր մի ընկեր—ԽՍՀՄ-ը։ Խորհրդային Միությունը չունի վոչ մի իմպերիալիստական շահ, վորտեղ ել վոր լինի, նա հետ է վանում ամեն տեսակի բաժանումները ուրիշների տերիտորիայի հաշվին, վորոնք բնավ համատեղելի չեն նրա խաղաղ քաղաքականության հետ։ ԽՍՀՄ-ը Ադդերի Լիգայում միշտ աջակցություն է ցույց տվել Չինաստանի արդարական պահանջներին։

Խորհրդային Միության արդարությունը վոգեշնչում է չինական ժողովրդին իր անկախության և ազատության համար պայքարում։ Իզուր չէ, վոր Կանտոնի և

Ուխանի անկումից հետո չինական «Սատանբաո» թերթը, որը մոտ է կանգնած բանակի ղեկավարությանը, գրեց.

«Մենք բավականաչափ ռազմական հանդերձանք ու սննդամթերք ունենք, որպեսզի յերկարատև պատերազմ մղենք: Յեթե որևե մեկն ասի, որ մեր կարծիքը չափազանց ոպտիմիստական է, մենք ցույց կտանք Խորհրդային Միության որինակը: Հոկտեմբերյան Հեղափոխությունից անմիջապես հետո քայքայված ու իմպերիալիստական տերությունների կողմից ողակված Խորհրդային Միությունը անկախության հասավ և պատության հասցրեց հարձակվողներին: Մի՞թե մենք ի վիճակի չենք հասնել դրան՝ մեր ամենաառատ բնական հարստությունների և մեր ժողովրդի մեծանական պայմաններում»:

ԽՍՀՄ-ի ժողովուրդների պայքարը և հաղթանակը ցույց են տալիս չինական մեծ ժողովրդին ճշմարիտ ճանապարհը՝ ճապոնական ստրկացնողներին չախչախելու համար:

Մեր սոցիալիստական յերկիրը չինական ժողովրդին ցանկանում է անկախ գոյություն, բարգավաճություն և ծաղկում: Խորհրդային հասարակությունը լարված ուշադրությամբ և ջերմ համակրությամբ հետևում է ճապոնական հավչտակիչների դեմ մղվող չինական մեծ ժողովրդի հերոսական պայքարին:

ՊԵՏ ԿՈՆ ՏՐԱԴԱՐԱՆ
ГОС БИБЛИОТЕКА
ZUUՈ-Aթm ССР
Ս. ԻՄ. Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL0202150

15 MAH. 1939
239 C арт-н 3025
ՏՐՎՈՒՄ Է ԶՐԻ